


1833



1885

(124)

“ՅԻՍՈՒՄԻ ՆԱՅԻՆՔ”

ԵՐՐ · ԺԲ · 2 :




● معارف عمومیه نظارت جلیل سنک رخصتیله
٢ ربيع الاول ٣٠٣ و ٢٦ تشرین ثانی ٣٠١ نیرو
مصارف آمریقان مسیونر شرکتی طرفندن تسویه اوئندرق

ԿՈՍՏԱՆԴԴՈՒՊՈՒՏԻՄ

Խ ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊԵՏԱԿԱՆ

1885



232.9

Z-61

“ՅԻՍՈՒԽԻ ՆԱՅԻՆՔ”

ԵՐՐ · ԺԲ · 2 :

→→→→○○↔↔↔↔

Միայն երկու բառերէ բաղկացեալ
խօսք է այս , բայց անոր մէջ կը պա-
րունակի կենաց ամբողջ գաղտնիքը :

“Յիսուսի նայինք” Սուրբ Գրոց մէջ,
սորվելու համար թէ ո՞վ է Նա , ի՞նչ
ըրած է մեզի համար , ի՞նչ կը չնորհէ
մեզ , եւ ի՞նչ կը պահանջէ մենէ , որ-
պէս զի օրինակ առնունք անոր բնա-
ւորութենէն , հրահանգութինք անոր
վարդապետութեամբ , անոր պատ-
ուիրամներն ընենք մեր օրէնքը , ա-
նոր խոստումները՝ մեր միսիթարու-
թիւնը , անոր անձին եւ գործքին
մէջ գտնենք յաղուրդ մեր հոգինե-

2001

բուն բոլոր կարօտութեանց :

"Յիսուսի նայինք" որ խաչուեցաւ, գտնելու համար անոր թափած արեան մէջ փրկանքը մեր մեղաց, մեր թողութիւնը եւ խաղաղութիւնը :

"Յիսուսի նայինք" որ յարեաւ ի մեռելոց, գտնելու համար անով այն արդարութիւնը որով միայն կ'արդարանանք, եւ որով թոյլ կը տրուի մեզ ամենուս որ ենք անարժան, մօտենալ վստահութեամբ, անոր անունով, Անոր Հօր եւ մեր Հօր, Անոր Աստուծոյն եւ մեր Աստուծոյն :

"Յիսուսի նայինք" որ է փառաւորեալ, գտնելու յանձին նորա մեր երկնաւոր Բարեխօսը, որ իւր միջնորդութեամբ կը կատարէ իւր ողմութեան եւ մեր փրկութեան գործը, որ այժմ իսկ "մեզի համար Աստուծոյ առջեւը (կը) ներկայանայ," եւ

կը լեցունէ մեր աղօթից թերին՝ իւր աղօթից զօրութեամբ որուն միշտ կը լուէ Հայրը :

"Յիսուսի նայինք" որ յայտնուած է Հոգւով Սրբով, որպէս զի անոր հետ հաղորդակցութիւն հաստատելով մաքրուին մեր ապականեալ սիրատերը, լուսաւորուին մեր խաւարեալ իմացողութիւնները, փոխուին մեր ապստամբ կամքերը, որպէս զի կարող ըլլանք յաղթանակ կանգնել աշխարհի եւ չարին յարձակմանց վրայ, ընդդիմանանք անսնց բոնութեանց Յիսուսով որ է մեր զօրութիւնը, ի դերեւ հաննենք անսնց խորամանկութիւնները Յիսուսով որ է մեր խմասութիւնը, զօրանալով Յիսուսի կարեկցութեամբ որ կրեց ամէն փորձութիւն, եւ օգնութեամբն Յիսուսի որուն ոչ ոք յաղթած է :

5/593 - Կ. հ.

37511-67



ՀԱՅ-Արմ. ՀՀ

ՀԱՅ-Արմ. ՀՀ

"Յիսուսի նայինք" որ ինչպէս թուզութիւն կու տայ մեղաց, կու տայ նաեւ զդշումն, որպէս զի տայ մեղ չնորհք ճանչնալ մեր մեղքերը, ողբալ անոնց վրայ, խոստովանել զանոնք եւ հրաժարիլ անոնցմէ :

"Յիսուսի նայինք" ընդունելու համար անկէ մեր օրբստօրական գործը, եւ առօրեայ խաչը, նաեւ անոր չնորհքը որ բաւական է կրելու համար խաչը եւ կատարելու համար գործը . համբերող ըլլալու համար տեսնելով անոր համբերութիւնը, եւ գործունեայ ըլլալու համար տեսնելով անոր գործունէութիւնը, եւ ունենալու համար սէր՝ տեսնելով անոր սէրը, ոչ խորհելով թէ ի՞նչ կրնամ ընել ես, բայց թէ ի՞նչ կրնայ չընել նա, եւ ապաւինելով անոր գործութեան որ "տկարութեան մէջ կը կատարուի :

"Յիսուսի նայինք" մեր անձը ուշբանալու եւ մոռնալու համար, որպէս զի փարատի մեր խաւարը անոր երեսաց լուսով, որպէս զի նուիրական ըլլան մեր ուրախութիւնք եւ զսպուխն մեր տրտմութիւնք, որպէս զի նա խոնարհեցունէ զմեղ եւ բարձրացունէ զմեղ, որպէս զի տրտմեցունէ զմեղ եւ միսիթարէ զմեղ, որպէս զի աղքատացունէ զմեղ եւ հարստացունէ զմեղ, որպէս զի սորվեցունէ մեղ աղօթել եւ պատասխանէ մեր աղօթից, որպէս զի մինչ կը թողու զմեղ աշխարհի մէջ՝ բաժնէ զմեղ աշխարհէն, մեր կեանքը պահուած ըլլալով անոր հետ Աստուծոյ քով, եւ մեր վարքը վկայ ըլլալով անոր մարդոց առջեւը :

"Յիսուսի նայինք" որ գարձեալ գացած ըլլալով իւր Հօրը տունը, հոն մեղի համար տեղ կը պատրաստէ, որ-

պէս զի այս օրհնեալ յոյսը քաջալերէ զմեղ ապրիլ առանց տրանջելու, եւ պատրաստէ զմեղ մեռնիլ առանց ցաւելու երբ գայ այն օրը դիմաւորելու համար վերջին թշնամին այսինքն մահը զոր յաղթած է նա մեր կողմանէ, եւ զոր մենք պիտի յաղթենք անոր ձեռքով, եւ այն թշնամին զոր ըրաւ մեղ բարեկամ, որ երբեմն էր զարհուրանաց թագաւոր, այժմ է հրեշտակ եւ պատգամաւոր յաւիտենական խաղաղութեան :

"Յիսուսի նայինք" որ զարձեալ պիտի գայ անշուշտ, թէպէտ յայտնի չէ թէ երբ, եւ որուն գալստեան յուսով կը սպասէ անոր հաւատարիմ Եկեղեցին, որ կը համբերէ, կը հոկէ եւ կը ցնծայ մտածելով թէ "Տէրը մօտ է"

Յիսուսի նայինք, որպէս զի սորվեցունէ մեղ՝ նայիլ իրեն, որ է ինչ-

պէս առարկայ նոյնպէս եւ Առաջնորդ մեր հաւատքին, որ ինքն է նաեւ կատարող մեր հաւատքին, եւ որպէս զի պահէ զմեղ այն հաւատքին մէջ մինչեւ ցվախճան :

"Յիսուսի նայինք" եւ ոչ ուրիշի ինչպէս մեր բնաբանը կը հասկցունէ լոելեայն, որ կ'ըսէ մեղ իսկոյն անոր վրայ հաստատել մեր աչուրները եւ դարձունել զանոնք բոլոր ուրիշ բաներէն : Յիսուսի նայինք եւ ոչ մեր անձերուն, մեր խորհուրդներուն, մեր արամաբանութիւններուն, մեր երեւակայութեանց, մեր փափաքանաց, մեր գաղափարաց . Յիսուսի՝ եւ ոչ աշխարհի, ոչ անոր ցանկութեանց, անոր օրինակներուն, անոր սկզբունքներուն, անոր գաղափարներուն . Յիսուսի՝ եւ ոչ Սատանային, թէպէտ նա աշխատի վախցունել զմեղ իւր

արհաւրօք կամ հրապուրէ զմեզ իւր
շողոքը թութիւններով :

Յիսուսի, եւ ոչ մեր կրօնական
գրութեանց թէպէտ անոնք ըլլան ա-
ւետարանական : Հաւատքը որ կը
փրկէ, որ կը սրբացունէ, եւ որ կը
միսիթարէ, չէ հաւանութիւն տալ
փրկութեան վարդապետութեան, այլ
է յարիլ Փրկչին Անձին : Բաւական
չէ միայն ճանչնալ զՅիսուս Քրիստոս,
այլ հարկ է ունենալ զնա . եւ ոչ ոք
կը ճանչնայ զնա ճշմարտիւ եթէ չատա-
նար զնա անյապաղ : Բատ խորիմաստ
ըանից սիրելի աշակերտին, “Կեանքը
անով էր, ու կեանքը մարդոց լոյսն
էր :”

Յիսուսի, եւ ոչ մեր յոյժ սիրելի
եւ յոյժ օրինաւոր երկրաւոր վայե-
լից, զի մի գուցէ այնչափ գերի ըլ-
լանք անոնց որ մեր աշաց տեսութե-

նէն արգելեն մինչեւ իսկ զԱյն որ
կը չնորհէ մեզ զանոնք :

Յիսուսի, եւ ոչ մեր զօրութեան :
Մեր զօրութիւնը կը նպաստէ մեր
փառաւորուելուն միայն, զԱստուած
փառաւորելու համար Աստուծմէ՛ զօ-
րութիւն ստանալ հարկ է :

Յիսուսի, եւ ոչ մեր տկարութեան :
Ողբալով մեր տկարութեանց վրայ,
միթէ երբէք եղած ենք աւելի զօ-
րաւոր : Յիսուսի նայելով մեր սիր-
տերը պիտի մասնակցին անոր զօրու-
թիւնէն եւ մեր շրթունք պիտի գո-
վարանեն զնա :

Յիսուսի, (եթէ զայս ըսել հարկ է,)
ոչ մեր արդարութեան, զոր կը կեղ-
ծենք թէ ունինք : Բուն հիւանդն այն
է որ թէպէտ հիւանդ է, զինք կը
համարի առողջ . բուն կոյրն այն է
որ թէպէտ կոյր է, կը համարի թէ

պայծառ կը տեսնէ : Եթէ վտանգաւոր է չատ մտածել մեր թշուառութեան վրայ , որ , աւազ , իրօք ենք թշուառ , եւս առաւել վտանգաւոր է հանդարատ եւ անխոռվ մնալ մեր երեւակայական արժանեաց վրայ :

Յիսուսի , եւ ոչ Օրէնքին : Օրէնքը հրամաններ կ'ընէ մեզ եւ չտար կարսղութիւն հնազանգել անոնց : Օրէնքը միշտ կը դատապարտէ եւ բնաւ չներեր : Բայց Յիսուս է "Օրէնքին վախճանը ամէն հաւատացեալին արդարութեան համար :"

Յիսուսի , եւ ոչ սրբութեան աստիճանին որուն հասած ենք թերեւս : Եթէ ոչ ոք հաւատալու է թէ ինքն է որդի մը Աստուծոյ ցորչափ կը տեսնէ արատներ իւր սրտին մէջ , եւ թերութիւններ՝ իւր կենաց մէջ , ո՞վ ուրեմն կարող է առնուլ փրկութեան

ցնծալից ձաշակը : Բայց այս ցնծութիւնը չդանուիր այս կերպով : Սըրըութիւնը մեր փրկութեան պառւղն է եւ ոչ արմատը : Այն է Յիսուս Քրիստոսի գործը զոր կ'ընէ մեղի համար եւ որ կը հաշտեցունէ զմեզ Աստուծոյ հետ . այն է Հոգւոցն Սըրոյ գործը մեր մէջ որ կը նորոգէ զմեզ անոր պատկերին . այն է անոր անփոփոխ խոստաման ստուգութիւնը , որ կ'երաշխաւորէ՝ յաւիտենական կեանք ամէն անոնց որ կ'ապաւինին անոր : Հաւասարապէս ստոյգ է թէ ապաւինին Փրկչին է ստոյգ ճամբայ հնազանգելու անոր կատարելապէս , եւ միայն մեղաց թողութեամբ խաղաղութիւն ունենալով Հոգին կ'ըլլայ զօրաւոր իւր պատերազմին մէջ : Եթէ կան այնպիսիք որ կ'եղծանեն այս օրհնեալ ճշմարտութիւնը որպէս զի

տան զիրենք առանց խղճահարու-
թեան՝ հոգեւոր թուլութեան, արդա-
րացուներով զիրենք ըսկով թէ ու-
նին հաւատք որով կը կարծեն թէ
կրնան արհամարհել սրբութիւնը զոր
չունին, պարտին յիշել Սրբոյն Պօղո-
սի վսեմ խօսքը, "Անոնք որ Քրիս-
տոսիներն են՝ իրենց մարմինը խաչ
հանեցին բնական կիրքերով ու ցան-
կութիւններով մէկտեղ." եւ Սրբոյն
Յովիաննու խօսքը," Ան որ կ'ըսէ թէ
ես անիկա ճանչցայ, ու անոր պատ-
ուիրանքները չպահեր, ստախօս է,
եւ անոր մէջը ճշմարտութիւն չկայ,"
պարտին յիշել նաեւ թէ ի՞նչ կ'ըսէ
նոյն լնքն Յիսուս. "Ամէն ծառ որ
բարի պառով չտար՝ կը կտրուի ու
կրակը կը ձգուի:"


Յիսուսի, եւ ոչ մեր հաւատքին:
Թշնամին երբ չկրնար մեղ նայել տալ

ուրիշ տեղ, կը գործածէ վերջին մի-
ջոց մի եւս, եւ այն է գարձունել մեր
աշուրները մեր Փրկչէն դէպ ի մեր
հաւատքը, եւ այսպէս վհատեցունել
զմեղ, եթէ տկար է մեր հաւատքը,
եւ հպարտացունել՝ եթէ զօրաւոր է
այն. որպէս զի թէ այս եւ թէ այն
կերպով տկարացունէ զմեղ:

"Յիսուսի նայինք" հիմա, եթէ տա-
կաւին բնաւ նայած չնեք անոր, Յի-
սուսի նայինք Վէրսովին, եթէ դադա-
րած ենք նայիլ անոր. նայինք Յի-
սուսի մայն, Յիսուսի՝ բարձրութեամբ, Յի-
սուսի՝ մէջ, նայինք հետ զնետէ եւս
առաւել վստահութեամբ, եւ սայն
պատկերին կը նորոգուինք փառաց
ի փառս," եւ այսպէս սպասենք այն
ժամուն երբ Նա պիտի կոչէ զմեղ որ
անցնինք երկրէս երկինք, ժամանա-
կէն՝ յաւիտենականութիւն, սպասենք



այն խոստացեալ ժամուն, այն օրհ-
նեալ ժամուն, երբ ի վախճանի “Անոր
պէս պիտի ըլլանք . վասն զի անիկա
պիտի տեսնենք՝ ինչպէս որ է”



ՀՀ Ազգային գրադարան



NL0028747

